ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 39-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3,4,5,6, և 7-րդ կետերով, 10-րդ հոդվածի 4-րդ մասով և 13-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով և 19-րդ հոդվածի 4-րդ կետով

Ախթալա համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում աղբահանության իրականացման կարգը համաձայն հավելված 1-ի,
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում աղբի հավաքման և փոխադրման պայմանները և կարգը՝ համաձայն հավելված 2-ի,
3. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում ոչ կենցաղային աղբի առաջացման դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները, ըստ անշարժ գույքի նպատակային և գործառնական նշանակության՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:
6. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի աղբահանության իրականացումը կատարել <<Ախթալա համայնքի բարեկարգում >> ՀՈԱԿ-ի կողմից:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Ախթալա համայնքի ավագանու
2021թ. սեպտեմբերի 13-ի թիվ 39–Ա որոշման

Կարգ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում աղբահանության իրականացման

Աղբի հեռացումը Ախթալա համայնքի վարչական տարածքից պետք է կատարվի համայնքի տարածքում տեղադրված աղբարկղերից, անհատական, բազմաբնակարան բնակելի շենքերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:
Աղբի հեռացումը աղբարկղերից պետք է կատարվի մասնագիտացված աղբատար մեքենայով: Աղբը պետք է հեռացվի մինչև աղբարկղերի ամբողջությամբ լցվելը: Աղբարկղերի շրջապատում առկա և հեռացման ընթացքում թափված աղբը պետք է հավաքվի և հեռացվի: Աղբատար մեքենաները և աղբամանները պետք է ենթարկվեն ախտահանման ախտահանիչ լուծույթով:

Անհատական և բազմաբնակարան բնակելի շենքերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից աղբի հեռացումը պետք է կատարվի միայն աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենաներով, փաթեթավորված կամ տարրաներում լցված աղբի բարձման միջոցով: Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պետք է պարտադիր հեռացվի՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

Աղբահանությունը Ախթալա համայնքում պետք է իրականացվի համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Մասնավոր առանձնատներ՝
հունվար-փետրվար ամիսներին՝ ամսական մեկ անգամ
մարտ-մայիս ամիսներին՝ ամսական երկու անգամ
հունիս-սեպտեմբեր ամսական երեք անգամ
սեպտեմբեր-դեկտեմբեր՝ ամսական երկու անգամ

N	Աղբամանի գտնվելու վայրը	Քանակը	Տեսակը
1	Ճոճկան	58	Մետաղյա
2	Ախթալա	48	Մետաղյա
3	Շամլուղ	22	Մետաղյա
4	Մեծ Այրում	20	Մետաղյա
5	Փոքր Այրում	5	Մետաղյա
6	Նեղոց	9	Մետաղյա

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄՈՒՍԻՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Ախթալա համայնքի ավագանու
2021թ. սեպտեմբերի 13-ի թիվ 39–Ա որոշման

Կարգ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանների

1. Սույն կարգով սահմանվում է Ախթալա համայնքում աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու կարգը:
2. Թույլտվությունը՝ տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ՝ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:
4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ , ավագանու կողմից համայնքի տարածքում սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:
6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը:
7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, չեն համապատասխանում ավագանու կողմից հաստատված պայմաններին: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
8. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄՈՒՍԻՆՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Լոռու մարզի
Ախթալա համայնքի ավագանու
2021թ. սեպտեմբերի 13-ի թիվ 39–Ա որոշման

Կարգ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի սանիտարական մաքրման սխեմայի

Ախթալա համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, բակերի, կամուրջների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, կենդանիների դիակներից, ձյունից, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն սահմանափակվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

Ամառային մաքրում. Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանք:

Ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագորման տարածքների մաքրումը աղբից, տերևակույտերից, կենդանիների դիակներից՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը:

Աղբը հավաքվում է փողոցներում տեղադրված աղբարկղերում:

Ձմեռային մաքրում. Այն իր մեջ ընգրկում է, փողոցների մաքրումը ձյունից, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովում է փողոցների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Ընդհանուր օգտագորման տարածքներից առաջացող աղբի ծավալը տարվա ընթացքում կազմում է՝ 28 տոննա:

Ախթալա համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները

Ախթալա համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդահնուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը պետք է կատարվի միայն աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենաների միջոցով՝ ձեռքով, իսկ աղբամաններից մեքենայացված բարձման միջոցով:

Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան մասնագիտացված մեքենայի կամ դրան փոխարինող մեխանիզմների միջոցով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄՈՒՍԻՆՅԱՆ

Հավելված 4
ՀՀ Լոռու մարզի
Ախթալա համայնքի ավագանու
2021թ. սեպտեմբերի 13-ի թիվ 39–Ա որոշման

Կիրառվող մեթոդներ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի 1 խմ աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության

N	Աղբառաջացման օբյեկտ /անձ/ կամ գործունեության տեսակ	Առաջացած աղբի նորմատիվները ամիս/խմ
1	Մթերային խանութներ	
ա	-40-70 քմ առևտրային մակերես	1.2
բ	-70-100 քմ առևտրային մակերես	1.6
2	Հանրային սննդի օբյեկտներ	
ա	-100 քմ-ից ավելի մակերես	3.2
3	Առողջապահական կենտրոններ	
ա	-625 քմ մակերես	1.0
4	Գրասենյակներ, օֆիսներ	
ա	-312 քմ մակերես	1.0
5	Հյուրանոցներ	
ա	-88,3 քմ մակերես	1.0

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄՈՒՍԻՆՅԱՆ

Հավելված 5
ՀՀ Լոռու մարզի
Ախթալա համայնքի ավագանու
2021թ. սեպտեմբերի 13-ի թիվ 39–Ա որոշման

Կարգ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման

Ախթալա համայնքում աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե Ախթալա համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու կողմից վերապահվել է համայնքի աշխատակազմին:

Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվության) վերաբերյալ:

Ախթալա համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաչափերին համապատասխան՝

կենցաղային աղբի համար՝

ըստ բնակության հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի.

ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ 4 հավելվածով սահմանված աղբի առաջքացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդների և աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրերի:

Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ախթալա համայնքի ղեկավարը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄՈՒՍԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021ԹՎԱԿԱՆԻ N 40-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի թիվ 408 որոշման պահանջներով՝

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի
ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 13- ի N 40-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՆԵՐ

1.Սույն կանոնադրությունը կազմված է ‹Քաղաքաշինության մասին›, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և ‹Տեղական ինքնակառավարման մասին› 42-րդ հոդվածի համաձայն, Ախթալա համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության առանձնահատուկ խնդիրները կանոնակարգելու նպատակով՝ քաղաքաշինության բնագավառի նորմատիվ-իրավական ակտերին համապատասխան:
2.Սույն կանոնադրության գործողությունը տարածվում է Ախթալա համայնքի տարածքում գտնվող քաղաքաշինական գործունեության բոլոր օբյեկտների վրա՝ անկախ սեփականության իրավունքի սուբյեկտներից:
3.Եթե Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերի և /կամ/ Ախթալա համայնքի/բնակավայրի/ գլխավոր հատակագծով սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների կանոնակարգման վերաբերյալ սահմանված են այլ նորմեր, ապա գործում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և/կամ/ գլխավոր հատակագծով սահմանված նորմերը:
4.Սույն կանոնադրությամբ սահմանված առանձին նորմերը համայնքի ավագանու որոշմամբ կարող են վերանայվել և փոփոխվել՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերով համապատասխան խնդիրների կանոնակարգման վերաբերյալ այլ նորմեր սահմանելու դեպքերում:

I. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. ,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 22.1 -րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի ,ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասինե թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն Ախթալա համայնքում ճարտարապետահատակագծային առաջադրանք տալիս է համայնքի ղեկավարը:
2.Առաջադրանք ստանալու համար կառուցապատողը համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտը՝ լրացված Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված ձևաթղթի համապատասխան:
3.Գոյություն ունեցող շենքում լրացուցիչ հարկ (այդ թվում մանսարդ) կառուցելու, կցակառույց կամ այլ բարելավում, վերափոխություն իրականացնելու համար նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին անհրաժեշտ է կցել շենքի կայունության, ամրության և հուսալիության վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը:
4.Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող գույքի ձևափոխման նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին կցվում է ,Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական լիազորված մարմնի համաձայնությունը կամ մասնագիտական եզրակացությունը:

5.Իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար առաջադրանքը տրամադրում է կամ մերժում՝ կառուցապատողի հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում, III կատեգորիայի օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում, իսկ մերժման դեպքում՝ նշում մերժման պատճառները, իսկ IV և V ռիսկային օբյեկտների համար համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի:
6. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել իրավասու մարմնին:
7.Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և 10 օրվա ընթացքում կառուցապատողին տալիս առաջադրանք:
8. Հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

II. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շինարարության թույլտվություն պահանջող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերը համաձայնեցվում են համայնքի ղեկավարի հետ:
2.Համաձայնեցման ներկայացվող նախագծին կցվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմանը համապատասխան իրականացված փորձաքննության եզրակացությունը (բացառությամբ սահմանված դեպքերում և կարգով նախագծողի գրավոր երաշխավորագրով թողարկված նախագծերի):
3.,Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, սահմանված դեպքերում կառուցապատողը պարտավոր է ապահովել նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության անցկացում, ներկայացնելով համապատասխան եզրակացություն՝ շրջակա բնական միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու և մեղմացնելու մասին:
4. Համաձայնեցման ներկայացվող նախագծի փաթեթում ներառվում է շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցը:
5. Նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են դրանք ներկայացնելու օրվանից՝
1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում.
2)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում.
6. Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են, դրանք կրկին ներկայացվեում են համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ ՝ 1) սահմանված ժամկետում:

III. ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի ,Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասինե թիվ 896 որոշմամբ:
2. Ոչ հիմնական շինությունների նախագծային փաստաթղթերը մշակվում են հողամասի տրամադրման մասին որոշման հիման վրա, որով ամրագրվում են շինությունների տարածական չափերը, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանները,

ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները՝ ելնելով տեղանքի և (կամ) օբյեկտի առանձնահատկությունից:
3.Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ նրա կողմից համաձայնեցված և պատվիրատուի կողմից հաստատված նախագծի հիման վրա:

IV. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1.Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժտված անձը:
2. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի ,Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասինե թիվ 88 որոշմամբ սահմանված կարգով՝ պատվիրատուի հայտի հիման վրա Ախթալա համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

V.ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող: Կառուցապատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, ,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ փաստաթղթերով:
2.Ախթալա համայնքում շինարարություն իրականացնելիս շրջակա միջավայրի անվտանգության, սանիտարական պաշտպանության, կառուցապատվող հողերի պահպանության խնդիրներն ապահովելու նպատակով, կառուցապատողը պարտավոր է կատարել հետևյալ կանոնները.
1)Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղբը համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր:
2)Փողոցներին հարող հողամասերում կառուցապատում իրականացնելիս մայթերը ժամանակավոր սարքավորել անվտանգ հետիոտն շարժումն ապահովելու համար անհրաժեշտ հարթակներով, բազրիքներով ու ծածկոցներով:

VI. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերը, ըստ օգտագործման բնութի, կառուցապատման իրավունքով կարող են տրամադրել հետևյալ ժամկետներով՝
ա/ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման բակային տարածքներում ավտոտնակների տեղադրման համար մինչև30 տարի ժամկետով, հասարակական

նշանակության կառույցների տեղադրման համար՝ մինչև 49 տարի ժամկետով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ մինչև 20 տարի ժամկետով:
բ/ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում /զբոսայգի, պուրակ/ հասարակական նշանակության/կրպակ, մանկական սրճարան-տաղավար, խաղասրահ, ատրակցիոն/ օբյեկտների տեղադրման համար մինչև 20 տարի ժամկետով:
2. Կառուցապատման իրավունքի տրամադրման համար վճարները սահմանվում են համայնքի ավագանու կողմից:

VII. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:
2. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և իրավական այլ ակտերով:

VIII. ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1.Ախթալա համայնքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունն իրականացվում է,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի, Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասինե թիվ 660 որոշման համաձայն և սույն կարգով:
2.Ախթալա համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին հասարակայնությանն իրազեկում է համայնքի ղեկավարը:
3.Իրազեկումն իրականացվում է.
1) համայնքային էլեկտրոնային կայք-էջում տեղադրմամբ.
2) հասարակական քննարկումներով:
4. Հասարակայնության ներկայացուցիչները սահմանված ժամկետում նորմատիվ և այլ իրավական ակտերով հիմնավորված դիտողությունները, առաջարկությունները, ինչպես նաև հրապարակված նախագծերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եզրակացությունները գրավոր ներկայացնում են համայնքապետարանի աշխատակազմին:
5. Համայնքի ղեկավարը հասարակայնության ներկայացուցիչների (դիտողությունների և առաջարկությունների հեղինակների) մասնակցությամբ դիտողությունների ու առաջարկությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից հետո 3-օրյա ժամկետում

ընդունում է համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին:

IX.ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1.Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:

2. Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:

3. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները) եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և (կամ) չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես նախագծով որոշված տարածքի սահմաններում:

5. Շինարարության (քանդման) թույլտվությունը Ախթալա համայնքում տալիս է համայնքի ղեկավարը ,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի ,Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասինե թիվ 596 որոշմամբ սահմանված կարգով:

6.Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո՝ ,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ,ժե կետով նախատեսված ժամկետով:

7. Շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել օրենքով սահմանված կարգով:

8.Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանց հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում համաձայնեցնող մարմնին:

9. Ախթալա համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե:

10. Թույլտվության տեսակներն են՝

1)նոր կառուցվող օբյեկտների, շենքերի և շինությունների, շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման թույլտվությունը,

2)գոյություն ունեցող օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման աշխատանքների կատարման թույլտվությունը,

3)գոյություն ունեցող օբյեկտների քանդման թույլտվությունը:

11.Կառուցապատողը շինարարության թույլտվություն ստանալու համար համայնքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝ 1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված ձև N 1), 2)օբյեկտի շինարարության համար՝ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերը, որտեղ նշվում են շինարարության

տևողության ժամկետը, իսկ փուլերով մշակվող նախագծի դեպքում՝ միջանկյալ հաստատվող փուլի նախագծային փաստաթղթերը:
12. Դիմումում նշվում են՝
1)օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,
2)օրենքով սահմանված դեպքերում՝ օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակած և սահմանված կարգով փորձաքննություն անցկացրած տնտեսավարող սուբյեկտները՝ համապատասխան գործունեության իրականացման լիցենզիաների համարներով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի երաշխավորագիրը:
13. Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղբը համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր:
14. Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
15. Սեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը քանդման թույլտվություն ստանալու համար համայնքապետարան է ներկայացում հետևյալ փաստաթղթերը.
1)դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված ձև N 2),
2)անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը և սեփականատիրոջ կողմից սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը):
16. Դիմումում նշվում են՝
1)քանդվող օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,
2) քանդման նպատակը,
3)քանդվող օբյեկտի հիմնական ցուցանիշները:
17.Թույլտվություն տվող իրավասու մարմինը կառուցապատողի (սեփականատիրոջ) ներկայացրած փաստաթղթերը քննարկում է և ընդունում որոշում թույլտվության կամ մերժման մասին՝ դիմում տալու օրվանից ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում:
18.Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված ձևերի:
19.Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյան, որը դրոշմակնքում է թույլտվություն տվող իրավասու մարմինը:
20.Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարության իրականացում հնարավոր չէ առանց գոյություն ունեցող օբյեկտի (օբյեկտների) քանդման, ապա սեփականատիրոջը տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, հանդիսանում է նաև քանդման թույլտվություն:
21.Օբյեկտի փաստացի քանդումն ու նոր շինարարությունն իրականացվում են շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված հերթականությամբ:
22.Այն դեպքում, երբ տեղանքի ճարտարագիտական ուսումնասիրություններն առանց քանդման անհնարին են, ապա քանդման թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ միաժամանակ՝ մինչև շինարարության թույլտվություն ստանալը, քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո:

23.Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում, և (կամ) հաջորդ աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն՝ ապա սեփականատիրոջը տրվում է քանդման թույլտվություն:
24.Համայնքի ղեկավարը տալիս է թույլտվություն կամ այն մերժում է (գրավոր իրազեկելով մերժման հիմքերի մասին) դիմումն ստանալու օրվանից՝
1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում.
2)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում:
25.Կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է ոչ ավելի, քան՝
1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.
2)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 7-օրյա ժամկետում:
26.Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվության տրամադրման կամ վերջինիս մերժման մասին կառուցապատողը տեղեկացվում է դիմումում նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով:
27.Թույլտվության ձևակերպման օրվանից 2 տարվա ընթացքում թույլտվությամբ նախատեսված աշխատանքները չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել թույլտվություն տվող իրավասու մարմնին՝ կառուցապատման տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ և սույն կարգի համաձայն նոր թույլտվություն ստանալու համար:
28.Կառուցապատողը շինարարական (քանդման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ տեղեկացնում է Ախթալայի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված N 5 ձևի, եթե թույլտվությամբ այլ ժամկետ նախատեսված չէ:
29.Կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է 5-օրյա ժամկետում՝ սույն կարգի 28-րդ կետում նշված մարմիններին տեղեկացնել շինարարության թույլտվության և (կամ) N 5 ձևում նշված համապատասխան տեղեկանքի տվյալների փոփոխման մասին:
30.Նախագծային լուծումների՝ սահմանված կարգով փոփոխման դեպքում շինարարության թույլտվության մեջ կատարվում է գրառում:

X. ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ախթալա համայնքում շինարարության ավարտը փաստագրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի ,Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասինե թիվ 626-Ն որոշմամբ սահմանված կարգով, նույն որոշմամբ հաստատված ձևի շինարարության շահագործման ակտի ձևակերպմամբ, նախագծով նախատեսված շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացումից հետո:
2.Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:

3. Դիմումին կցվում են՝
1)ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկկողմանի ակտը.
2)երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները.
3)կատարողական փաստաթղթերի ցանկը.
4)ակտի ձևակերպման համար ,Տեղական տուրքերի և վճարների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:
4. Համայնքի ղեկավարը ներկայացված փաստաթղթերի հիման վրա ձևակերպում է շահագործման ակտը՝ դիմումն ստանալու օրվանից՝
1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.
2)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:
5.Կառուցապատողի ցանկությամբ ավարտական ակտը կարող է ձևակերպվել առանց նախագծով նախատեսված այնպիսի աշխատանքների իրականացման, որոնց համար ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 որոշմամբ հաստատված կարգի չի պահանջվում շինարարության թույլտվություն:
6.Ինքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա չէ փաստագրման:
7. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետներում գրավոր տեղեկացնում է դիմողին՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կարգի 3-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:
8.Իրավասու մարմնի առաջադրած պահանջները բավարարվելու դեպքում շահագործման ակտը ձևակերպվում է կառուցապատողի կրկնակի դիմումը տալու օրվանից եռօրյա ժամկետում:
9.Շահագործման ակտը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մնում է համայնքապետարանում, մեկական օրինակ տրվում է կառուցապատողին, կապալառուին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարմնին:

XI ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. ,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկում է համայնքի վարչական տարածքում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:
2.Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն համայնքի ղեկավարը քննում է շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ, շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված

քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատումը չավարտելու վերաբերյալ գործերը:

XII ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

1.,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի ,Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասինե թիվ 802 որոշմամբ սահմանված կարգով և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը Ախթալա համայնքում կատարում է համայնքի ղեկավարը:

Ախթալայի համայնքապետարանի աշխ.քարտուղար՝ Ա.Մուսինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 41-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով՝

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2021 թվականի 3-րդ եռամսյակում ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:
3.Ձեռնարկել միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 42-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով՝

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) տարածաշրջանային տնօրենի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգում բացել Ախթալա համայնքի առանձնացված արտաբյուջետային հաշիվ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -2 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 43-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀՏԶՀ) ԿՈՂՄԻՑ «ԱԽԹԱԼԱ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ, ՈՐԸ ՀԱՆՁՆՎԱԾ ԷՐ <<ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-ԻՆ, ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ և 32-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Քննչական Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի քննիչ Ս. Դանիելյանի 17.06.2021 թվականի թիվ 53-1077-21գրությունը

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանի համար Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից «Ախթալա խոշորացված համայնքի կոմունալ սպասարկման ոլորտի տեխնիկական վերազինում, գյուղատնտեսության աջակցություն և տրանսպորտային համակարգի ձևավորում» ծրագրային փաթեթով ձեռք բերված էքսկավատորի ELAZ-BL880,FD-5X /ELAZBL880A20P0431 հիդրավլիկ մուրճը՝ 2425 000 /երկու միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար /ՀՀ դրամ արժողությամբ, որը անհատույց օգտատարծման էր տրամադրված ,,Ախթալա համայնքի բարեկարգում >> ՀՈԱԿ-ին: Անհայտ անձի կողմից 17.05.2021 թվականին գողացվել է Ճոճկան գյուղի 7-րդ փողոցի չհսկվող տարածքից, որի համար հարուցվել էր թիվ 55157621 քրեական գործ և հարուցված քրեական վարույթը կասեցնելու և վերոնշյալ գույքը՝ գողոնը չգտնելու պատճառով, այն հանել համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 44-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ՃՈՃԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԼՐԱՂԱՑԻ ՇԵՆՔԻ ՄԻ ՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով և հաշվի առնելով Ճոճկան գյուղի բնակիչ Արտակ Սերյոժայի Մոսինյանի 03.09.2021 թվականի դիմումը

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ճոճկան գյուղում գտնվող , համայնքային սեփականություն հանդիսացող ալրաղացի շենքի մի մասը հատկացնել Ճոճկան գյուղի բնակիչ Արտակ Սերյոժայի Մոսինյանին, կերաղաց և զտիչ տեղադրելու և օգտագործելու համար, վճարելով ծախսած էլ.էներգիայի գումարը և տարեկան 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ վարձակալության վճարը:

2. Ախթալա համայնքի ղեկավարին՝ կնքել վարձակալության տրամադրման պայմանագիր 3 /երեք/ տարի ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 45-Ա

ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.<<Խազեր>> էկոլոգամշակույթային հասարակական կազմակերպության կողմից Ախթալա համայնքի Ճոճկան բնակավայրի <<Ճոճկան >> կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամին նվիրաբերած 30,3 կվտ արևային ֆոտովոլտային կայանը՝ 9030000 /ինը միլիոն երեսուն հազար>> ՀՀ դրամ գումարով նվիրաբերել և ընդգրկել Ախթալա համայնքի հաշվեկշռում:

2.<<Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության կողմից բարեգործական նպատակներով նվիրաբերած գույքը ՝ ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Թումանյան 7 հասցեի տարածքի արհեստական խոտածածկույթով , 22 մետր լայնությամբ և 42 մետր երկարությամբ ֆուտբոլի դաշտը ՝ 17 372 940 /տասնյոթ միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ գումարով ընդգրկել Ախթալա համայնքի հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 46-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Հողային օրենսգրքի>> 76-րդ 81-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի վարչական տարածքում մինչև 12 քմ գերեզմանի տարածքներ տրամադրել անվճար, իսկ 12 քմ -ից ավել տարածքներ տրամադրելու համար սահմանել 3.000 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 47-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԶԱՎԱԿԻ ԾՆՎԵԼՈՒՑ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա
որոշմանը համապատասխան,

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի բյուջեի 10.4.1-ի 4729 հոդվածից հատկացնել զավակի ծնվելուց նպաստ՝ համաձայն հավելվածի :

2.ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետի ժ/պ Մանե Բեգջանյանին լիազորել Հայէկոնոմ բանկի Ալավերդու մասնաճյուղից ստանալու հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՉՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՉՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու

2021 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 47-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՁԱՎԱԿԻ ԾՆՎԵԼՈՒՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Ախթալա համայնքի

Ախթալա քաղաքի

1. Հռիփսիմե Էդուարդի Թորոսյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,
2. Ինգա Ավագի Շախկյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

Շամլուղ քաղաքի

3. Աշոտ Հակոբի Քոչարյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,
4. Արփինե Արայիկի Հովակիմյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,
5. Սիմոն Վազգենի Նավասարդյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

Մեծ Այրում գյուղի

6. Էսմիրա Մելիքի Մելքումյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,
7. Անի Արթուրի Միկոյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,
8. Անահիտ Արկադիի Այվազյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

Նեղոց գյուղի

9. Արմինե Վանկի Գրիգորյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,
10 . Ռիտա Մելսիկի Բեգջանյան	20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

Ընդամենը՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Ախթալայ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ա. Մուսինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 48-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա որոշմանը համապատասխան

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի բյուջեի 10.3.1-ի 4726 հոդվածից Ախթալա համայնքի
Ախթալա քաղաքի բնակիչներ՝
Էդիկ Սարգսի Կարապետյանի մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը հատկացնել Դիանա Հովհաննեսի Կարապետյանին
Լաուրա Բադալի Քառյանի մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը հատկացնել Արևշատ Գարեգնի Ճիճիլյանին
Արմեն Եղիշի Սարաջյանի մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը հատկացնել Մելինե Արմենի Սարաջյանին,
Շամլուղ քաղաքի բնակիչ՝
Ժորժիկ Գարեգինի Ռևազյանի մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը հատկացնել Անի Արմենի Դալլաքյանին,
Ճոճկան գյուղի բնակիչներ՝
Մելիսա Արամի Մարտիրոսյանի մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը հատկացնել Հայկ Մելիսի Մարտիրոսյանին
Աշխարհբեկ Արամի Հախվերդյանի մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը հատկացնել Նոդար Աշխարհբեկի Հախվերդյանին

Մեծ Այրում գյուղի բնակիչներ՝

Վալերի Ներսեսի Սահակյանի մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը հատկացնել Նվեր Վալերիի Սահակյանին

ՀՀ Լոռու մարզիա Ախթալա համայնքի ավագանու2021 թվականի հուլիսի 13-ին թիվ 34-Ա որոշման համաձայն Ախթալա համայնքի բնակիչ Ալբերտ Զուրաբի Սիրադեղյանի /մահացած՝ 16.05.2021 թ./ մահվան 30 000 ՀՀ դրամ գումարը, որը դուրս է գրվելտղայի՝ Նարեկ Ալբերտի Սիրադեղյանի անվամբ, սակայն չի տրամադրվել իրեն՝ ՌԴ-ում գտնվելու պատճառով, այն հատկացնել Ալբերտ Զուրաբի Սիրադեղյանիկնոջը՝ Սոնա Սուրենի Սիրադեղյանին:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՉՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 Սեպտեմբեր 2021թվականի N 49-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետի ժ/պ Մանե Բեգջանյանին լիազորել Հայէկոնոմ բանկի Ալավերդու մասնաճյուղից ստանալու հատկացված գումարները:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու

2021 թվականի սեպտեմբերի 13 -ի թիվ 49–Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Քնարիկ Արշակի Պողոսովա	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
2. Ռուզաննա Ռուբենի Ներկարարյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
3.Վլադիմիր Գրիգորի Մուրադյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
4.Լամարա Թադևոսի Միրզոյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
5.Հեղինե Հրաչիկի Սարգսյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
6.Նարինե Թաթուլի Քառյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
7.Ամալյա Վոլոդյայի Մուրադյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
8.Աստղիկ Արշավիրի Կոնինյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
9.Մարինե Սիմոնի Կարապետյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
10.Ղարիբ Հարությունի Սարգսյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
11.Ռոզա Պավլիկովնա Կոզմանովա	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
12.Էթերա Գեորգիի Ժուժունաշվիլի	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
13. Մարինե Արարատի Բեժանյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
14.Վարուժան Հայկի Մեջլումյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
15.Նազիկ Աբգարի Գասպարյան	10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ

Ընդամենը՝ 150 000 / հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ

Ախթալայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝
Ա.Մուսինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 50-Ա

,,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ,, ԾՐԱԳՐԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման » (այսուհետ՝ ՀՀՏԶ) ծրագրի անդամակցության հայտը վերահաստատելու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն ,,Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման,, ծրագրի անդամակցության հայտը վերահաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ախթալա համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՔԵԼՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

ԲԵԺԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՅՈՐԳԻ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԹԱՄԱՉՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ Ա. ԹԱՄԱՉՅԱՆ